# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Օձուն գյուղական համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, Էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

**թիվ 209-14**
**«25» 07 2014 թ.**

*ՀՀ Լոռու մարզպետ*
*Պարոն Ա. Նալբանդյանին*

Ձեզ ենք ներկայացնում Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 23-ի N 32-ից N 35 որոշումները:

Առդիր՝ տաս թերթ:

***Օձուն համայնքի ղեկավար*** ***Ա. Տիտանյան***

Կատարող՝ Վ. Տիտանյան
հեռ. 0253-6-16-62

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**«23» հուլիսի 2014 թվականի N 32-Ա**

**ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 23-ի յոթերորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ի N 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՉՈԲԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Կողմ ( 7 )** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ԶԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2014թ., հուլիսի 23**
**Գ. Օձուն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**«23» հուլիսի 2014 թվականի N 33-Ն**

**ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ի N 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

**1.**Կատարել փոփոխություն Օձուն համայնքի ավագանու «17» դեկտեմբերի 2013 թվականի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 60-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ ( 7 )** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2014թ., հուլիսի 23**
**Գ. Օձուն**

*Հավելված*
*ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու*
*2014 թվականի հուլիսի 23 -ի N 33-Ն որոշման*

# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «17» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու «17» դեկտեմբերի 2013 թվականի «ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեի մասին» N 60-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

**1.** 01.1.1. գործառնական դասակարգման նախահաշվում՝
- 4111 հոդվածի ծախսը պակասեցնել մեկ միլիոն վեց հարյուր հազար (1.600,000) ՀՀ դրամով.
- 4221 հոդվածի ծախսն ավելացնել մեկ հարյուր հազար (100.000) ՀՀ դրամով.
- 4264 հոդվածի ծախսն ավելացնել չորս հարյուր հազար (400.000) ՀՀ դրամով.
- 4252 հոդվածի ծախսն ավելացնել չորս հարյուր հազար (400.000) ՀՀ դրամով.

**2.** 04.5.1. գործառնական դասակարգման նախահաշվում, 4251 հոդվածի ծախսն ավելացնել իննը հարյուր հազար (900.000) ՀՀ դրամով.

**3.** 04.9.1. գործառնական դասակարգման նախահաշվում, 4241 հոդվածի ծախսը պակասեցնել վաթսունութ հազար (68,000) ՀՀ դրամով.

**4.** 06.4.1. գործառնական դասակարգման նախահաշվում՝
- 4212 հոդվածի ծախսը պակասեցնել մեկ հարյուր հիսուն հազար (150.000) ՀՀ դրամով.
- 4251 հոդվածով նախատեսել մեկ հարյուր հիսուն հազար (150.000) ՀՀ դրամ.

**5.** 08.2.3. գործառնական դասակարգման նախահաշվում, 4637 հոդվածի ծախսը պակասեցնել ութ հարյուր հազար (800.000) ՀՀ դրամով.

**6.** 08.2.7. գործառնական դասակարգման նախահաշվով նախատեսված մեկ միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար յոթ հարյուր (1.885,700) ՀՀ դրամը պակասեցնել, ընդ որում՝
- 5112 հոդվածի ծախսը պակասեցնել մեկ միլիոն ութ հարյուր հազար (1.800,000) ՀՀ դրամով.
- 5134 հոդվածի ծախսը պակասեցնել ութսունհինգ հազար յոթ հարյուր (85,700) ՀՀ դրամով.

**7.** 09.1.1. գործառնական դասակարգման նախահաշվում, 4637 հոդվածի ծախսը պակասեցնել հինգ հարյուր հազար (500.000) ՀՀ դրամով (N 1 մանկապարտեզ).

**8.** 09.5.1. գործառնական դասակարգման նախահաշվում, 4637 հոդվածի ծախսն ավելացնել երեք հարյուր հիսունիննը հազար վեց հարյուր (359.600) ՀՀ դրամով.

**9.** 11.1.2. գործառնական դասակարգման նախահաշվում, 4891 հոդվածի ծախսը պակասեցնել երեք միլիոն յոթ հարյուր հազար (3.700,000) ՀՀ դրամով.

**Եկամտային հատված.**

Ընթացիկ սուբվենցիաներ՝ եկամուտի գումարն ավելացնել մեկ միլիոն երեք հարյուր հիսունիննը հազար վեց հարյուր (1.359,600) ՀՀ դրամով.

Հողի հարկը պակասեցնել վեց միլիոն վեց հարյուր իննը հազար երեք հարյուր (6.609,300) ՀՀ դրամով.

Գույքահարկը պակասեցնել մեկ միլիոն մեկ հարյուր քառասունչորս հազար չորս հարյուր (1.144,400) ՀՀ դրամով:

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**«23» հուլիսի 2014 թվականի N 34-Ա**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի բ) ենթակետի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի վարձատրության չափը և գյուղապետարանի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի:

2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի բյուջետային հիմնարկների 2014 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 2, 3, 4 և 5 հավելվածների:

3. Ուժը կորցրած ճանաչել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 25-ի «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 26-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ ( 7 )** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՋԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2014թ., հուլիսի 23**
**Գ. Օձուն**

*Հավելված 1*
*ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու*
*2014 թվականի հուլիսի 23-ի N 34-Ա որոշման*

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

5. Աշխատակիցների թվաքանակը՝ 16։
6. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 210000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 113000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 113000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 130000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահ | 1 | 120000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 120000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 5 | 78000 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ-գանձապահ | 1 | 77500 |
| Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 77000 |
| Տեխ. սպասարկման անձնակազմ | | |
| Գործավար | 1 | 100000 |
| Վարորդ | 1 | 100000 |
| Հավաքարար | 1 | 70822 |

Օձուն համայնքի ղեկավար՝ ______________ ______________
ստորագրություն անուն, ազգանուն

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 23-ի N 34-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

5. Աշխատակիցների թվաքանակը՝ 16:
6. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 105000 |
| Դաստիարակ | 3 | 93000 |
| Երաժշտության դաստիարակ | 0.5 | 93000 |
| Գործավար, մանկավարժ | 1 | 82000 |
| Տնտեսվար | 0.75 | 66139 |
| Խոհարար | 0.75 | 80000 |
| Հաշվապահ | 0.5 | 80000 |
| Դաստիարակի օգնական | 3 | 66139 |
| Խոհարարի օգնական | 0.5 | 80000 |
| Օժանդակ բանվոր | 0.5 | 80000 |
| Դռնապահ | 0.5 | 80000 |
| Բակապահ | 0.5 | 80000 |
| Բուժքույր | 0.5 | 80000 |

Օձուն համայնքի ղեկավար՝ ______ Ա. Տիգրանյան
ստորագրություն անուն, ազգանուն

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ * ԼՈՌՈՒ ՄԱՐԶ * ՀՀ * 06600612

Հավելված 3
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 23-ի N 34-Ա որոշման

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՆԱ ՀԱԲԵՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

5. Աշխատակիցների թվաքանակը՝ 17:
6. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 105000 |
| Դաստիարակ | 3 | 93000 |
| Երաժշտության դաստիարակ | 0.5 | 93000 |
| Գործավար | 0.5 | 80000 |
| Պարուսույց, ռուսերենի դասատու | 0.5 | 93000 |
| Տնտեսվար | 0.75 | 66139 |
| Խոհարար | 0.75 | 80000 |
| Հաշվապահ | 0.5 | 80000 |
| Դաստիարակի օգնական | 2 | 66139 |
| Դաստիարակի օգնական | 1 | 70822 |
| Խոհարարի օգնական | 0.5 | 80000 |
| Օժանդակ բանվոր | 0.5 | 80000 |
| Բուժքույր | 0.5 | 80000 |
| Բակապահ | 0.5 | 80000 |

Օձուն համայնքի ղեկավար՝ ______________ ______________
ստորագրություն անուն, ազգանուն

Հավելված 4
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 23-ի N 34-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՕՁՈՒՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

5. Աշխատակիցների թվաքանակը՝ 22:
6. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 100000 |
| Հաշվապահ | 1 | 75000 |
| Դասատու | 7 | 66139 |
| Դասատու | 10 | 70822 |
| Տնտեսվար | 0.75 | 66139 |
| Պահակ | 0.75 | 66139 |
| Տեխ. աշխատող | 0.75 | 66139 |

Օձուն համայնքի ղեկավար՝ ______________ Ա. Տերտերյան
ստորագրություն անուն, ազգանուն

Հավելված 5
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 23-ի N 34-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՕՁՈՒՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

5. Աշխատակիցների թվաքանակը՝ 6:
6. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 71000 |
| Գրադարանավար | 1 | 66139 |
| Գրադարանավար | 0.75 | 66139 |
| Ֆուտբոլի թիմի մարզիչ | 0.75 | 66139 |
| Հավաքարար | 0.75 | 70822 |
| Պահակ ցերեկային | 0.75 | 66139 |

Օձուն համայնքի ղեկավար՝ ______ Ա. Տերտերյան
ստորագրություն   անուն, ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**<<23>> հուլիսի 2014 թվականի N 35-Ա**

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՉՈԲԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15 – րդ հոդվածի 3 – րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման.

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Օձուն համայնքի բնակիչ Աշոտ Սերյոժայի Չոբանյանին (հասցե գ. Օձուն, փողոց 21, տնակ 17, ՀՎՀՀ 13791196) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2013 թվականի գույքահարկի տույժից՝ չորս հազար երկու հարյուր վաթսուն (4.260) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշման համար հիմք են հանդիսանում Օձուն համայնքի բնակիչ Ա. Չոբանյանի դիմումը և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ ( 7 ) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|

Ս. ԱՄՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2014թ., հուլիսի 23**
**Գ. Օձուն**